ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնք
Հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Դաշտ համայնք
Հեռ.՝ 094 404 402
Էլ. փոստ՝ dashthamaynq@list.ru
Համայնքային կայք՝ dasht.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 նոյեմբերի 2019 թվական N 35

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ գյուղական համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 7 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՀՈՒՆՈՅԱՆ ՌՈԲԵՐՏ
5. ՂԱՐԻԲՅԱՆ ՎԱՐԴԿԵՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **ՍՈՒՍԱՆԱ ՂԱՍԱԲՈՎԱ**

2019 թվականի նոյեմբերի «22»
Դաշտ համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Դաշտ գյուղական համայնքի
ավագանու 2019 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 35 որոշման

1. Օրակարգը հաստատելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 31-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի 2020 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի վարչական տարածքում տեղական վճարների 2020 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական վճարի գծով արտոնություններ սահմանելու մասին
6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով վաճառելու համաձայնություն տալու մասին
7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ 17 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Դաշտի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար՝ Լ. Ղասաբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնք
Հասցե՝ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Դաշտ, Մաշտոցի 34
Հեռ.՝ +374 94 404 402
Էլ. փոստ՝ dashthamaynq@list.ru
Համայնքային կայք՝ dasht.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«22» նոյեմբերի 2019 թվական N 36–Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 31-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից ստացված փորձագիտական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 31-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին տողի 3-րդ սյունակի «3137.5» թիվը փոխարինել « 2637.5» թվով.
2) որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ տողի 3-րդ սյունակի «0» թիվը փոխարինել «429.3» թվով.
3) որոշման հավելվածի 2-րդ կետի 1-ին տողի 3-րդ սյունակի «14570.0» թիվը փոխարինել «15170.0» թվով.
4) որոշման հավելվածի 2-րդ կետի 2-րդ տողի 3-րդ սյունակի «530.0» թիվը փոխարինել «3534.4» թվով.
5) որոշման հավելվածի 2-րդ կետի 5-րդ տողի 3-րդ սյունակի «250.0» թիվը փոխարինել «350.0» թվով.
6) որոշման հավելվածի 2-րդ կետի 6-րդ տողի 3-րդ սյունակի «3850.0» թիվը փոխարինել «3150.0» թվով.
7) որոշման հավելվածի 2-րդ կետի 9-րդ տողի 3-րդ սյունակի «3208.6» թիվը փոխարինել «130.5» թվով.
8) որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին տողի 3-րդ սյունակի «17204.0» թիվը փոխարինել «16904.0» թվով.
9) որոշման հավելվածի 3-րդ կետի 5-րդ տողի 3-րդ սյունակի «100.0» թիվը փոխարինել «0» թվով.

10)որոշման հավելվածի 3-րդ կետի 7-րդ տողի 3-րդ սյունակի «100.0» թիվը փոխարինել «71.0» թվով.

11) որոշման հավելվածի 3-րդ կետի 9-րդ տողի 3-րդ սյունակի «200.0» թիվը փոխարինել «300.0» թվով.

12) որոշման հավելվածի 3-րդ կետի 10-րդ տողի 3-րդ սյունակի «80.0» թիվը փոխարինել «106.0» թվով.

13) որոշման հավելվածի 3-րդ կետի 11-րդ տողի 3-րդ սյունակի «1280.0» թիվը փոխարինել «1180.0» թվով.

14) որոշման հավելվածի 3-րդ կետի 12-րդ տողի 3-րդ սյունակի «250.0» թիվը փոխարինել «350.0» թվով.

15) որոշման հավելվածի 3-րդ կետի 13-րդ տողի 3-րդ սյունակի «100.0» թիվը փոխարինել «200.0» թվով.

16) որոշման հավելվածի 3-րդ կետի 16-րդ տողի 3-րդ սյունակի «3208.6» թիվը փոխարինել «130.5» թվով.

17) որոշման հավելվածի 3-րդ կետի 18-րդ տողի 3-րդ սյունակի «50.0» թիվը փոխարինել «250.0» թվով.

18)որոշման հավելվածի 3-րդ կետը լրացնել նոր՝ 19-րդ տողով՝ «Պարտադիր վճարներ» վերնագրով և «3.0» թվով.

19)որոշման հավելվածի 3-րդ կետը լրացնել նոր՝ 20-րդ տողով՝ «Տրանսպորտային սարքավորումներ» վերնագրով և «3007.4» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՀՈՒՆՈՅԱՆ ՌՈԲԵՐՏ
5. ՂԱՐԻԲՅԱՆ ՎԱՐԴԿԵՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **ՍՈՒՍԱՆՆԱ ՂԱՍԱԲՈՎԱ**

2019 թվականի նոյեմբերի «22»
Դաշտ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնք
Հասցե՝ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Դաշտ, Մաշտոցի 34
Հեռ.՝ +374 94 404 402
Էլ. փոստ՝ dashthamaynq@list.ru
Համայնքային կայք՝ dasht.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» նոյեմբերի 2019 թվական N37-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից ստացված փորձագիտական եզրակացությունը՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի 2020 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՀՈՒՆՈՅԱՆ ՌՈԲԵՐՏ
5. ՂԱՐԻԲՅԱՆ ՎԱՐԴԿԵՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **ՍՈՒՍԱՆԱ ՂԱՍԱԲՈՎԱ**

2019 թվականի նոյեմբերի «22»
Դաշտ համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Դաշտ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 22-ի
N 37-Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 3000 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հիմգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր

մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ հազար հինգ հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն կետիի 1-ին մասի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն կետի 1-1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հիսուն հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տասնութ հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տասնհինգ հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար երեք հարյուր դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար ինը հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար հինգ հարյուր դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար երեք հարյուր դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հոթ հազար հինգ հարյուր դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ վաթսուն հազար դրամ,

դ. խաղատների համար՝ մեկ հարյուր հիսուն հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ յոթանասունհինգ հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ երեսուն հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար վեց հարյուր յոթանասուն դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար երեք հարյուր հիսուն դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար յոթ հարյուր դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնյոթ հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հարյուր հիսուն դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հարյուր յոթանասուն դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար երեք հարյուր հիսուն դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար յոթ հարյուր դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար հինգ հարյուր դրամ.

11) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ վեց հարյուր դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հիսուն դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ չորս հարյուր հիսուն դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության,

աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տասը հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

Դաշտի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղարի փոխարինող Լ. Ղասաբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնք
Հասցե՝ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Դաշտ, Մաշտոցի 34
Հեռ.՝ +374 94 404 402
Էլ. փոստ՝ dashthamaynq@list.ru
Համայնքային կայք՝ dasht.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» նոյեմբերի 2019 թվական N 38-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով, 11-րդ հոդվածի 2-րդ մասով, 13-րդ և 14-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասով և 14-րդ հոդվածովև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից ստացված փորձագիտական եզրակացությունը՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական վճարների 2020 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՀՈՒՆՈՅԱՆ ՌՈԲԵՐՏ
5. ՂԱՐԻԲՅԱՆ ՎԱՐԴԿԵՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **ՍՈՒՍԱՆԱ ՂԱՍԱԲՈՎԱ**

2019 թվականի նոյեմբերի «22»
Դաշտ համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Դաշտ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 22-ի
N 38-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ յուրաքանչյուր մասնակցի համար՝ 5000 (հինգ հազար) դրամ.

2) բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության կազմակերպման համար.

ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝

ամսական 50 (հիսուն) դրամ,

3) ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը՝ ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա.առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 (հիսուն) դրամ,

բ.արտադրական, արդյունաբերական և գրասենյակային շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 (հինգ) դրամ,

գ.կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 3 (երեք) դրամ,

4) Ոչ կենցաղային աղբի համար՝

ա.ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3 000 (երեք հազար) դրամ,

բ.ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10 000 (տաս հազար) դրամ:

Համայնքապետարանի աշխատակազմի
քարտուղարի պաշտոնակատար՝ Լ. Ղասաբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնք
Հասցե՝ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Դաշտ, Մաշտոցի 34
Հեռ.՝ +374 94 404 402
Էլ. փոստ՝ dashthamaynq@list.ru
Համայնքային կայք՝ dasht.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» նոյեմբերի 2019 թվական N 39

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով.

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել, որ Դաշտ համայնքում կենցաղային աղբահանության ծառայություններից օգտվողների համար 2020 թվականի համար սահմանված աղբահանության վճարի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ աղբահանության վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե վճարողները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների (նրանց հավասարեցված անձաց) ընտանիքների անդամներ:
2. Սույն որոշմամբ նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք են հանդիսանում հետևյալ փաստաթղթերը՝
   Դաշտ համայնքի ղեկավարին ուղղված ծառայությունից օգտվող ընտանիքի անդամի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, պաշտպանության ոլորտի իրավասու պետական կամ այլ մարմնի կողմից տրամադրված տեղեկանքի և (կամ) վկայականի և (կամ) տվյալ փաստը հավաստող այլ փաստաթղթերի պատճենները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ

4. ՀՈՒՆՈՅԱՆ ՌՈԲԵՐՏ

5. ՂԱՐԻԲՅԱՆ ՎԱՐԴԿԵՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **ՍՈՒՍԱՆՆԱ ՂԱՍԱԲՈՎԱ**

2019 թվականի նոյեմբերի «22»

Դաշտ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, Դաշտ
Հեռ.՝ 094 404 402
Էլ. փոստ՝ dashthamayq@list.ru
Համայնքայինկայք՝ dasht.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«22» նոյեմբերի 2019 թվական N 40

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի ղեկավարին՝ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 04-037-0011-0011 ծածկագրի տակ գտնվող 0.1144 հեկտար հողամասը 302 000 (երեք հարյուր երկու հազար) դրամ մեկնարկային գնով, գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության 04-037-0152-0006 ծածկագրի տակ գտնվող 0.8462 հեկտար հողամասը 28 560 (քսանութ հազար հինգ հարյուր վաթսուն) դրամ մեկնարկային գնով, գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության 04-037-0151-0002 ծածկագրի տակ գտնվող 2.6458 հեկտար հողամասը 89 300 (ութսունինը հազար երեք հարյուր) դրամ, գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող (անջրդի) գործառնական նշանակության 04-037-0152-005 ծածկագրի տակ գտնվող 2.2694 հեկտար հողամասը 278 000 (երկու հարյուր յոթանասունութ հազար) դրամ արժեքով, աճուրդով վաճառելու:
2. Հողամասերի մեկնարկային գների հողամասերի կադաստրային արժեքի 50%-ն է:
3. Բաց աճուրդային կարգով օտարման մեկնարկային քայլ սահմանել հողամասերի մեկնարկային գների 5%-ը: Մասնակցության վճար սահմանել 5000 դրամ:

4. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները, աճուրդն իրականացնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

Կողմ -5

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՀՈՒՆՈՅԱՆ ՌՈԲԵՐՏ
5. ՂԱՐԻԲՅԱՆ ՎԱՐԴԿԵՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **ՍՈՒՍԱՆՆԱ ՂԱՍԱԲՈՎԱ**

2019 թվականի նոյեմբերի «22»
Դաշտ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնք
Հասցե՝ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Դաշտ, Մաշտոցի 34
Հեռ.՝ +374 94 404 402
Էլ. փոստ՝ dashthamaynq@list.ru
Համայնքային կայք՝ dasht.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» նոյեմբերի 2019 թվական N 41

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-Ի ԹԻՎ 17- ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-N որոշման 5-րդ մասի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությամբ, հիմք ընդունելով գնահատման հանձնաժողովի և Դաշտ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 4-ի N17 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1)որոշմամբ հաստատված ծրագրով գնման ենթակա տրակտորի տեխնիկական բնութագիրը փոփոխել և հաստատել նոր տեխնիկական բնութագրով՝ համաձայն հավելվածի:
   2) քանի որ գնման այլ ընթացակարգի կիրառումը ժամկետի առումով անհնար է, թույլատրել համայնքի ղեկավարին տրակտորի գնումն իրականացնել «Հրատապ մեկ անձ» գնման ընթացակարգով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՀՈՒՆՈՅԱՆ ՌՈԲԵՐՏ
5. ՂԱՐԻԲՅԱՆ ՎԱՐԴԿԵՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **ՍՈՒՍԱՆԱ ՂԱՍԱԲՈՎԱ**

2019 թվականի նոյեմբերի «22»
Դաշտ համայնք